



## «ՀԵՐԱՑԻ»

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### *Հաստատվել է*

«Հերացի» արհեստակցական  
կազմակերպության Համաժողովի  
04.05.2015 թվականի թիվ 01 որոշմամբ

Նախագահ  
Մարթա Միմոնյան

### *Գրանցվել է*

ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց  
պետական ռեգիստրի կենտրոնական  
մարմնի կողմից 08.05.2015 թվականին  
Գրանցման թիվ 211.190.857709  
Վկայական 03 Ա 100770  
ՀՎՀՀ 02638203

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հերացի» արհեստակցական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) աշխատողների հիմնադրված հասարակական միավորում է, որն օրենքով սահմանված կարգով և ազատ կամքի դրսևորումով միավորում է Համալսարանի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողներին՝ իրենց աշխատանքային, սոցիալական և դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական, սոցիալական իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու նպատակով:

2. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան քաղաք, 0025, Կոբյունի 2:

3. Կազմակերպությունն անկախ է պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, Համալսարանից, այլ կազմակերպություններից, հաշվետու չէ և նրանց կողմից վերահսկողության ենթակա չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4. Կազմակերպությունը համագործակցում է այլ արհեստակցական կազմակերպությունների, միությունների և դաշնությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային արհեստակցական միությունների և այլ հասարակական միավորումների հետ:

5. Կազմակերպության գործունեության իրավական հիմքը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն է, Աշխատանքային օրենսգիրքը, «Արհեստակցական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև այլ իրավական ակտեր և սույն կանոնադրությունը:

6. Կազմակերպության հարաբերությունները Համալսարանի՝ ի դեմս ռեկտորի հետ կարգավորվում է ՀՀ Աշխատանքային պայմանագրով, պայմանագրերով և ՀՀ գործող օրենքներով:

7. Կազմակերպությունը ինքնուրույն է որոշում իր կառուցվածքը, ընտրում՝ ղեկավար և վերահսկող մարմիններ, հրավիրում համաժողովներ և ղեկավար այլ մարմինների նիստեր, ստեղծում աշխատակազմ, կազմակերպում նրա աշխատանքը:

8. Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման պահից: Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ, ունի իր կնիքը հայերեն և անգլերեն լեզուներով և հաշիվ բանկում:

### **Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ռ Ի Թ Յ Ա Ն Ե Պ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Ը, Ի Ր Ա Վ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ն Ո Ւ**

#### **Պ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Ր Ը**

9. Կազմակերպության նպատակներն են.

ա) ներկայացնել և պաշտպանել Կազմակերպության անդամի աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական ու այլ շահերը և իրավունքները գործատուի կամ երրորդ անձանց մոտ,

բ) Համալսարանին առաջարկությունների ներկայացումը՝ աշխատողների աշխատանքի, սոցիալական և հանգստի պայմանների բարելավման, աշխատանքի

վարձատրության չափի և կարգի վերաբերյալ, պարզևատրման և խրախուսման հարցերով,

գ) Համալսարանի հետ աշխատողի աշխատանքային կարգապահական կանոնների հարցերի քննարկումը և առաջարկությունների ներկայացումը:

10. Կազմակերպության իրավունքներն են.

ա) Համալսարանի և այլ կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքումը,

բ) ՀՀ օրենսդրությանը համապատասխան Համալսարանի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պաշտպանությունը,

գ) աշխատողների առողջարարական և հանգստի կազմակերպման, զբոսաշրջիկության և մարզական միջոցառումների իրականացումը,

դ) աշխատանքից դուրս այլ հանրօգուտ աշխատանքների, փառատոնների, մրցույթների կազմակերպումը,

ե) դիտարկումներ է իրականացնում աշխատողների աշխատանքի պայմանների, անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման նկատմամբ,

զ) Համալսարանին ներկայացնում է միջնորդագրեր, եզրակացություններ աշխատողների իրավունքների, աշխատանքի պայմանների հետ կապված հարցերում:

11. Կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրները իրագործելու նպատակով իրավունք ունի Համալսարանից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից ստանալու ՀՀ օրենսդրությամբ սահմանված և չարգելված ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք չհամարվող տեղեկություններ:

12. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և անհրաժեշտության դեպքում կարող է կազմակերպել միջոցառումներ, վարել բանակցություններ Համալսարանի ղեկավարության, համալսարանական այլ կառույցների, պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների, նրանց պաշտոնական անձանց հետ:

13. Կազմակերպությունը կարող է լուսաբանել իր գործունեությունը զանգվածային լրատվության միջոցներով:

## Կ Ա Ձ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Յ Ա Ն Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր Ը

14. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Կազմակերպության անդամ՝ կամավորության սկզբունքով, կարող է լինել Համալսարանի յուրաքանչյուր աշխատող, ով ընդունում է սույն կանոնադրությունը, ճանաչում և իրականացնում է նրա պահանջները, սույն կանոնադրությամբ սահմանված չափով և ժամկետում մուծում է մուտքի վճարը և անդամավճարը:

Կազմակերպության Գործադիր կոմիտեի որոշված դեպքերում Կազմակերպության անդամ կարող են լինել նաև այլ կազմակերպությունների աշխատողներ:

15. Կազմակերպությանը անդամակցելը և անդամակցությունից դուրս գալը կամավոր է:

Կազմակերպությանը անդամակցելու մասին աշխատողի դիմումը քննարկում է Կազմակերպության Գործադիր կոմիտեն, Նախագահի անունով դիմումը տալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Աշխատողը համարվում է Կազմակերպության անդամ՝ Գործադիր կոմիտեի կողմից այդ մասին որոշում ընդունելու պահից:

Արհեստակցական կազմակերպության անդամին կարող է տրվել անդամատոմս:

Կազմակերպությանը անդամակցելու մասին դիմումը մերժվելու դեպքում աշխատողը կարող է կրկին դիմել առնվազն երեք ամիս հետո: Դիմումը մերժելու մասին Գործադիր կոմիտեի որոշումը պետք է լինի գրավոր և հիմնավորված: Մերժման պատճառը չի կարող լինել աննպատակահարմարությունը:

16. Կազմակերպության անդամը՝ օրենսդրության և/կամ սույն կանոնադրության պահանջները խախտելու դեպքում Գործադիր կոմիտեի որոշմամբ կարող է նախագգուշացվել կամ հեռացվել Կազմակերպությունից:

17. Կազմակերպության անդամը իրավունք ունի.

- ընտրել և ընտրվել գործադիր կոմիտեի և վերստուգիչ մարմնի կազմերում.
- գործադիր կոմիտեի քննարկմանը ներկայացնել փաստաթղթերի նախագծեր, առաջարկություններ, ստանալ դրանց վերաբերյալ որոշումներ.
- դիմել գործադիր կոմիտեին իր աշխատանքային և սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության միջնորդությամբ.

- մասնակցել կոլեկտիվ պայմանագրի և համաձայնագրի նախագծերի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին .
- մասնակցել գործադիր կոմիտեի գործունեության ծրագրերի մշակմանը .
- տեղեկատվություն ստանալ գործադիր կոմիտեից Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության մասին:

18. Կազմակերպության անդամը պարտավոր է.

- կատարել սույն կանոնադրության պահանջները, գործադիր կոմիտեի որոշումները.
- սահմանված չափով և ժամկետում մուծել անդամավճարը և մուտքի վճարը .
- Կազմակերպության անդամությունից դուրս գալու որոշման մասին գրավոր տեղեկացնել գործադիր կոմիտեին .
- ցուցաբերել փոխադարձ համերաշխություն Կազմակերպության անդամների միջև աշխատանքային և սոցիալ-տնտեսական իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված Կազմակերպության միջոցառումների ժամանակ:

### **Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն Ն Ե Ր Ը**

19. Կազմակերպության կառավարման մարմիններն են՝

- Համաժողովը,
- Գործադիր կոմիտեն,
- Նախագահը:

Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով Կազմակերպության ներսում ստեղծվում է Գործադիր կոմիտեի խորհուրդ, հանձնաժողովներ և հանձնախմբեր:

Կառավարման բոլոր մարմինների նիստերին իրավունք ունի մասնակցելու գործատուի ներկայացուցիչը խորհրդակցական ձայնի իրավունքով:

#### *Հ ա մ ա ժ ո ղ Վ ը*

20. Համաժողովը Կազմակերպության բարձրագույն մարմինն է, որի նիստերը հրավիրվում են բոլոր անդամների մասնակցությամբ կամ ներկայացուցչության սկզբունքով (այսուհետ՝ Համաժողովի մասնակիցներ): Համաժողովի ներկայացուցչության կարգը և համամասնությունները սահմանում է Գործադիր կոմիտեն:

Համաժողովի լիազորությունների ժամկետը երկու տարի է:

Համաժողովի նիստերը հրավիրվում է Նախագահի կողմից, առնվազն տարին մեկ անգամ:

Արտահերթ նիստ հրավիրելու իրավունք ունեն Կազմակերպության նախագահը և Գործադիր կոմիտեի անդամների առնվազն մեկ երրորդը:

Համաժողովի նիստի, այդ թվում արտահերթ՝ հրավիրման ժամկետի և օրակարգի մասին Համաժողովի մասնակիցները տեղեկացվում են Նախագահի կողմից՝ հրավիրման օրվանից առնվազն երեք շաբաթ առաջ:

Համաժողովը համարվում է իրավագոր, եթե նրա աշխատանքներին մասնակցում է Համաժողովի մասնակիցների երկու երրորդը:

Համաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Համաժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ:

Քվեարկության կարգը՝ բաց կամ փակ (գաղտնի), որոշում է Համաժողովը:

Համաժողովն ունի Կազմակերպության գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Համաժողովի իրավասություններն են.

- Կազմակերպության կանոնադրության հաստատումը, նրանում փոփոխություններ և լրացումներ կատարելը .
- Կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունումը .
- Նախագահի ընտրությունը և պաշտոնից ետ կանչելը .
- Գործադիր կոմիտեի անդամների թվակազմի որոշումը և անդամների ընտրությունը .
- Վերահսկողական մարմնի ընտրությունը .
- Նախագահի հաշվետվությունների գնահատումը .
- Վերահսկողական մարմնի հաշվետվության արդյունքների ամփոփումը .
- անդամավճարի չափի և վճարման կարգի սահմանումը .
- օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:

#### *Գործադիր կոմիտե*

21. Համաժողովների նիստերի միջև ընկած ժամանակահատվածում Կազմակերպության աշխատանքները ղեկավարում է Գործադիր կոմիտեն:

Գործատուն իրավունք չունի լինելու Գործադիր կոմիտեի անդամ:

Գործադիր կոմիտեն՝

- հրավիրում է Համաժողովի և Գործադիր կոմիտեի նիստերը, հաստատում է այդ մարմինների օրակարգը, անցկացման տեղը և ժամկետը.
- իրագործում է Համաժողովի որոշումները, սույն կանոնադրության պահանջները.
- օրենքով սահմանված կարգով կազմակերպում միջոցառումներ.
- ընդունում է Կազմակերպության կազմում նոր անդամների, հեռացնում է անդամությունից.
- հաստատում է Կազմակերպության բյուջեն.
- քննարկում է ֆինանսական ստուգումների արդյունքները.
- ընտրում է Նախագահի տեղակալին, եթե այդպիսի պաշտոն սահմանել է և գործադիր կոմիտեի քարտուղարին՝ Նախագահի լիազորությունների ժամկետով, ետ կանչում նրան զբաղեցրած պաշտոնից.
- ստեղծում է հանձնաժողովներ, հանձնախմբեր, կատարում է աշխատանքի բաժանում Գործադիր կոմիտեի անդամների միջև.
- լսում է Նախագահի գործունեության հաշվետվությունները.
- որոշում է Կազմակերպության վճարովի աշխատատեղերը և աշխատավարձերի չափերը:

Գործադիր կոմիտեի նիստը հրավիրվում է հաստատված ժամանակացույցի համաձայն կամ ըստ անհրաժեշտության, առնվազն երեք ամիսը մեկ անգամ և իրավագոր է, եթե նրա աշխատանքին մասնակցում է Գործադիր կոմիտեի անդամների ոչ պակաս քան երկու երրորդը:

Գործադիր կոմիտեի որոշումները համարվում են ընդունված, եթե որոշման օգտին քվեարկում են նիստին մասնակցած կոմիտեի անդամների կեսից ավելին: Քվեարկության կարգը՝ բաց կամ փակ (գաղտնի), որոշում է Գործադիր կոմիտեն:

Գործադիր կոմիտեի շրջանակներում գործում է Գործադիր կոմիտեի խորհուրդը, որի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են Կազմակերպության նախագահը, նախագահի տեղակալը, Գործադիր կոմիտեի քարտուղարը, հանձնաժողովների և հանձնախմբերի նախագահները, Վերահսկողական մարմնի նախագահը: Խորհուրդն ի պաշտոնե նախագահում է Կազմակերպության նախագահը: Խորհուրդը խորհրդակցական-մեթոդական մարմին է, որը տալիս է Գործադիր կոմիտեի և Նախագահի կողմից իրականացվող գործառույթների կազմակերպման մասին խորհրդատվական,

մեթոդական ցուցումներ: Խորհրդի նիստերը գումարվում են Նախագահի կողմից որոշված պարբերականությամբ:

*Ն ա խ ա գ ա հ*

22. Կազմակերպության Նախագահը ընտրվում է Համաժողովում՝ Համաժողովի ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով: Կազմակերպության Նախագահն ի պաշտոնե Գործադիր կոմիտեի նախագահն է:

Նախագահը՝

- իրագործում է Համաժողովի և Գործադիր կոմիտեի որոշումների կատարումը.
- նախագահում է Համաժողովի և Գործադիր կոմիտեի նիստերը.
- գործատուի հետ փոխհարաբերություններում ներկայացնում և պաշտպանում է Կազմակերպության և անդամների շահերը.
- ներկայացնում աշխատողների շահերը պետական մարմիններում և այլ կազմակերպություններում.
- Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի.
- Կազմակերպության անունից տալիս է լիազորագրեր.
- աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքային պայմանագրեր է կնքում և աշխատանքի է ընդունում, ինչպես նաև աշխատանքից ազատում է Կազմակերպության աշխատողներին.
- կնքում է գործարքներ Կազմակերպության անունից.
- հաստատված Կազմակերպության բյուջեի շրջանակներում տնօրինում է Կազմակերպության ֆինանսական միջոցները.
- իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ.
- ընդունում է Կազմակերպության անդամության դիմումները և ներկայացնում Գործադիր կոմիտեի քննարկմանը:

23. Նախագահի բացակայության դեպքում Նախագահի լիազորություններն իրականացնում է Նախագահի տեղակալը կամ քարտուղարը:

**Վ Ե Ր Ա Հ Ս Կ Ո Ղ Ա Կ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն Ը**

24. Կազմակերպության Վերահսկողական մարմինը մշտապես գործող մարմին է, առնվազն երեք անդամով, որի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ:



Վերահսկողական մարմնի լիազորությունների ժամկետը համապատասխանում է Համաժողովի լիազորությունների ժամկետին:

25. Վերահսկողական մարմնի որոշումները համարվում են ընդունված, եթե որոշման օգտին քվեարկել են նիստի ներկաների պարզ մեծամասնությունը:

26. Վերահսկողական մարմինը հաշվետու է անմիջականորեն Համաժողովին:

27. Վերահսկողական մարմինը վերահսկողություն է իրականացնում Նախագահի և Գործադիր կոմիտեի իրավասությունների և Կազմակերպության կառավարման գործընթացի, բյուջեի կատարման, այդ թվում ֆինանսական ու ընթացիկ գործունեության նկատմամբ և այդ մասին տարեկան կամ արտահերթ հաշվետվություն է ներկայացնում Համաժողովին:

### **Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Յ Ա Ն Գ Ո Ւ Ց Ք Ը**

28. Կազմակերպության սեփականությունը գոյանում է մուտքի վճարներից, անդամավճարներից, կամավոր ներդրումներից, նվիրատվություններից, ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

29. Կազմակերպության անդամության մուտքի վճարի չափը սահմանվում է 100 դրամի չափով:

30. Կազմակերպության անդամավճարի չափը սահմանվում է աշխատավարձի 0.5 տոկոսի չափով:

Անդամավճարի գանձումը կատարվում է գործատուի հետ համաձայնեցված կարգով՝ աշխատողների աշխատավարձից 0.5 տոկոս փոխանցելով Կազմակերպության բանկային հաշվին:

31. Գործադիր կոմիտեն, ի դեմս տնօրենի տիրապետում, օգտագործում և տնօրինում է Կազմակերպության սեփականությունը՝ սույն կանոնադրության և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

32. Կազմակերպությունն իր սեփականության միջոցներից ծախսեր է կատարում աշխատողների նյութական օգնության, խրախուսման, միջոցառումների իրականացման, աշխատողներին աշխատավարձ վճարելու, ինչպես նաև Համաժողովի ու գործադիր կոմիտեի որոշմամբ այլ ծախսեր կատարելու նպատակով:

33. Գործադիր կոմիտեի նախագահը յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում, 3 ամսվա ընթացքում Համաժողովին ներկայացնում է իր սեփականության օգտագործման հաշվետվություն, վերահսկողական մարմնի ստուգումների ակտի հետ միասին:

**Կ Ա Ձ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Թ Յ Ա Ն Վ Ե Ր Ա Կ Ա Ձ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Մ Ը**

**Ե Վ Լ Ո Ւ Ծ Ա Ր Ո Ւ Մ Ը**

34. Կազմակերպության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը) իրականացվում է Համաժողովի որոշմամբ, օրենքով սահմանված կարգով:

35. Կազմակերպության լուծարումը տեղի է ունենում Համաժողովի որոշմամբ և օրենքով սահմանված կարգով:

---